ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ՄԵԾԱՄՈՐԻ № 59 ԴԱՄԲԱՆԱԲԼՈՒՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր է. Վ. ԽԱՆԶԱԴՅԱՆ

Արարատյան դաշտավայրի կենտրոնում, ջրերով և բուսականությամբ հարուստ գեղատեսիլ մի վայրում վեր է խոյանում հազարամյակների անցյալ ունեցող Մեծամորի ամրոցը։ Երկարամյա պեղումների նախնական տվյալներով ապացուցված է, որ մարդն այստեղ բնակություն է հաստատել դեռևս մ. թ. ա. V հազարամյակի վերջից և որ կյանքը հարատևել է մինչև մ. թ. XVIII դարը։

Մեծամորի դամբարանադաշտը հանդիսացել է մի շարք սերունդների հանդստարանը։ Վերջին տվյալների համաձայն այն զբաղեցրել է գրեթե 200 հա մակերես։ Չնայած մինչ այժմ պեղվել են միջին և ուշ բրոնզի, վաղ և զարգացած երկաթի դարաշրջանի թաղումներ, սակայն այստեղ մենք կանգ կառնենք միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի և հատկապես № 59 դամբանաբլուրի պեղումների վրա։

Հայկական լեռնաշխարհի հասարակությունը մ. թ. ա. III հազարամյակի վերջում և մ. թ. ա. II հազարամյակի I կեսում թևակոխում է միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի զարգացման մի ինքնատիպ փուլ, որի ուսումնասիրությունը լի է հակասություններով, երբեմն նաև թվագրության խճճված, անլուծելի հարցերով բարդեցված։

Միջին բրոնզի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածում՝ Հայաստանի տարածքում գոյություն են ունեցել երկու մշակութային համալիրներ։ Մեկն անվանվել է Կիբովական-թրիալեթյան, մյուսը՝ կարմիրբերդյան (թազաքենդյան)։

Ժամանակին հնագետ Հ. Մարտիրոսյանը, հենվելով երկրորդական և ոչ ամբողջական կոմպլեքսների խեցեղենի վրա, միջին բրոնզի դարաշրջանի Կիբովական-թրիալեթյան և կարմիրբերդյան համալիրների կողքին առանձնացրել է ևս մի խումբ՝ «Սևան-ուզերլիկյան»[1]։ Նրան հետևեցին նաև մեր մյուս հնագետները՝ Կ. Քուշնարյովան, Հ. Սիմոնյանը և այլք։ Սակայն մի շարք բազմաշերտ հուշարձանների՝ Մուխաննաթթափայի[2], 1966 թ. սկսած՝ Ջրահովիտի, ապա Այգեվանի[3], Հառիճի[4] և հատկապես Մեծամորի[5] բնակատեղիի և հիմնականում միջնաբերդում պեղված միջին բրոնզի դարաշրջանի մշակութային շերտերի հինգ հորիզոններում «Սևան-ուզերլիկյան» գունազարդ և սև ագաթափայլ բջիջագարդ խեցեղենի, նաև կարմիրբերդյանի համատեղ հայտնաբերվելը խոսում էր այն մասին, որ նրանց հնարավոր չէ երկու՝ կարմիրբերդյան և «Սևան-ուզերլիկյան» մշակութաժամանակագրա-

---

1 А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964. с. 13.

2 *Տե՛ս ՀՊՊԹ, կոլ. № 1216, 1439։*

3 *Տե՛ս ՀՊՊԹ, կոլ. № 2570։*

4 Т. С. Хачатрян. Древняя культура Ширака III—I тыс. до н. э. Ереван, 1975, погреб. № 29. 66. 108. с. 105—106. рис. 60—62.

5 *է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, է. Ս. Պարսամյան. Մեծամոր. Երևան, 1973, էջ 24—25։*

կան խմբերի բաժանել։ Այդ մասին իմ կողմից զեկուցվել է ինչպես տեղական (1987 թ.)[6], այնպես էլ Պոզնանում և Թբիլիսիում (1989 թ.) կայացած միջազգային գիտաժողովներում, որտեղ ներկայացվել են որպես համաժամանակյա մշակութային համայիր և, նկնելով այդ մշակույթի հայտնաբերման առաջին վայրից, նրան տրվել է կարմիրբլրդյան մշակույթ անունը։ Այժմ հնագետների մի մասը դանում է, որ այդ երկու խմբերը մշակութաթվագրական առումով պետք է միացնել[7], սակայն մյուս կողմից նշում, որ «Սևանուղերլիկյան» խումբը ներկայացնում է կարմիրբլրդյան մշակույթին նախորդող վաղ լոկալ թվագրական փուլ[8]։

Այդ մշակույթների մեկ միասնական ամբողջություն ներկայացնելու օգտին է խոսում նաև Մեծամորի դամբարանների ուսումնասիրությունը։

Հայկական լեռնաշխարհը միջին բրոնզի դարաշրջանի կիրովական-թրիալեթյան մշակութային փուլում թևակոխում է հասարակության զարգացման մի նոր պատմական առաջընթացի շրջան։ Այն, ինչպես ուսումնասիրությունները են հավաստում, խարսխված էր դեռևս մ. թ. ա. III հազարամյակում քոչոր-պետությունների շեմը ոտք դրած վաղ բրոնզի դարաշրջանի հասարակության կարևորագույն ձեռքբերումների վրա՝ տնտեսության, մշակույթի և դաղափարախոսության ասպարեզում։ Զարգացման մի նոր փուլ են թևակոխում երկրագործությունը, անասնապահությունը, տրհեստները։ Մեծ առաջընթաց է ապրում տեխնոլոգիական նոր միջոցներով հագեցած մետաղագործությունը։ Երևան են գալիս նոր տիպի զենքեր, աշխատանքային գործիքներ, ակնագործական իրեր։ Մետաղագործությունը մշակույթի զարգացման ամենահզոր խթաններից մեկն էր, առևտրական կապերի հաստատման հիմնական օղակը։

Դեռևս պղնձիից վաղ բրոնզի անցման փուլում (մ. թ. ա. 4000—3250 թթ.) Սիրիայից էբլայեցիները ապա նաև շումերացիները Եփրատով դեպի վեր ընացող առևտրական ճանապարհով հասնում էին պատմական Հայաստանի խարբերդի ոսկերը հովիտ, պղնձի և արծաթի հանքերով հարուստ Անդրզտան (Արդանա-Մադեն) մոտ գտնվող շուկան, որտեղ տեղացիները հաճույքամբ նրանց էին վաճառում մետաղ և նրա մշակման տեխնոլոգիական դաղտնիքները[9]։

Մշակութային առաջընթացի արագ տեմպերը, հարստության կուտակումը, փոխանակային արժեքների ստեղծումը և առևտրական նոր կապերի աշխուժացումն առաջավորասիական երկրներն և հյուսիս-արևմտյան Իրանի, Կովկասի հետ, իրենց հերթին նպաստեցին Հայկական լեռնաշխարհի մի զգալի հատվածում միջին բրոնզի դարաշրջանում տեխնոլոգիական, մշակութային և դաղափարախոսական ինովացիայի տարածմանը[10]։

Միջին բրոնզի դարաշրջանում ուշագրավ տեղաշարժեր են կատարվում արտաքին աշխարհում։ Անատոլիայում սկսվում է ասսուրական «գաղութագաղութացման» շրջանը։ Եռևան են գալիս հսկայական պատմական նշանակություն ունեցող տեղեկություններ։ Համուրապին (մ. թ. ա. 1792—1750 թթ.) ավարտում է Միջագետքի միավորումը և ստեղծում մի հզոր պետություն Բաբելոն

6 Է. Վ. Խանգաղյան. Մեծամորը միջին բրոնզի դարաշրջանում։ Հայկական ԽՍՀ-ում 1985—1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 13։

7 Г. Е. Арешян, В. Э. Оганисян, Ф. М. Мурадян, П. С. Аветисян, Л. А. Петросян. Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры.—Историко-филологический журнал (ИФЖ), Ереван, 1990, № 1, с. 57.

8 Նույն տեղում, էջ 8, 68, 74։

9 Дж. Мелларт. Торговля и торговые пути между Северной Сирией и Анатолией (4000—1500 гг. до н. э.). Древняя Эбла. М., 1985, с. 23—24.

10 Э. В. Ханзадян. Развитие палеометаллических культур Армянского нагорья. Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа. Тезисы докладов всесоюзного симпозиума, Ереван, 1982, с. 36.

մայրաքաղաքով։ Կենտրոնական Փոքր Ասիայում մ. թ. ա. XVIII դարի կեսին իշխող է դառնում խեթական թագավորությունը, որի սեպագիր արձանագրություններում կցկտուր տեղեկություններ են պահպանվել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան հատվածում ստեղծված Հայասա-Ազզի պետության մասին։

Անշուշտ, բարձր սոցիալ-քաղաքական զարգացման հասած վերոհիշյալ երկրների ոլորտում էր գտնվում Հայկական լեռնաշխարհը, որի բուն, կենտրոնական սարածքի հուշարձանները, ցավոք, ուսումնասիրված չեն, բացակայում են նաև գրավոր աղբյուրները։

Հայկական լեռնաշխարհի միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի ուսումնասիրության ասպարեզում իր ուրույն տեղն ունի Մեծամորը։ Սկսած 1965 թ. պեղվում է ամրոցն իր բնակատեղիով և դամբարանադաշտով։ Մեծամորի միջին բրոնզի դարաշրջանի դամբարանների և միջնաբերդի շինարարական հորիզոնների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում էական ճշտումներ մտցնելու զարգացման փուլերի թվագրության և ուսումնասիրվող մշակույթի բնութագրման հարցում, վեր հանելու նրա առևտրական, փոխանակային կապերը հին-արևելյան երկրների, կենտրոնական Կովկասի և հյուսիս-արևելյան Կովկասի հետ։

Մեծամորը պատկանում է միջին բրոնզի դարաշրջանի կարմիրբերդյան մշակութային համալիրին։ Մինչև այժմ այնտեղ պեղվել են յոթ դամբանաբլուրներ։ Նրանցից ամբողջական էին երեքը, որոնց օրինակով կարելի է վերականգնել թաղման ծեսը։ Քարահողային դամբանաբլուրի տակ գտնվող կրոմլեխի կենտրոնում քարարկղը ծածկված է խոշոր քարաբեկորներով կամ սալերով։ Ննջեցյալը պառկեցված է քարարկղի երկրորդ կեսում, աջ կողքի վրա, կծկված վիճակում։ Կավամանները, որպես կանոն, շարված են քարարկղի դլխամասում, ննջեցյալի գանգից վեր։ Մյուս իրերը՝ դաշույն, նետասլաք, շքասեղ, ուլունքներ, հերակալներ, խնկարկման մանրակերտ բուրանոթ և այլն դտնվում են գանգի մոտ, դեմքի դիմաց, վգի ոդերի և ձեռքերի մոտ։ Պեղված բոլոր դամբարանները համաժամանակյա են և կարող են թվագրվել մ. թ. ա. XVI—XV դդ.։

Ուշադրության է արժանի հատկապես № 59 դամբարանը։ Այն պեղվել է 1980 թ. դամբարանադաշտի արևելյան, հարավ-արևելյան կողմում, երրորդ պեղահարթակում, երկրորդ առվի մեջ և մասամբ նրա աջ եզրին։ Դամբարանը ծածկված էր քարահողային ծածկույթով, որի արևմտյան հատվածն էր պահպանվել, մոտ 0,5 մ բարձրությամբ և 4,0 մ տրամագծով։ Քարահողային ծածկույթը հեռացնելուց հետո բացվեց կրոմլեխի մի ոչ մեծ հատված, կառուցված միջին մեծության բազալտի անմշակ քարերի կորագիծ շարքով։ Սալերով ծածկված քարարկղը գտնվում էր գետնի մակերեսից մոտ 1,2 մ խորության մեջ։ Այն ուղղված էր արևմուտքից արևելք։

Բավականաչափ ուշագրավ էր դամբարանի ծածկը։ Միմյանց հպվող, թեք գոված, հովհարաձև փռված չորս սալ քարերը դամբարանի արևմտյան մասում մի տեսակ կեղծ կամար էին առաջացնում (սալերից երկուսի չափերն են՝ 0,7×0,85 մ, մյուս երկուսինը՝ 0,65×0,95 մ)։ Ամենամեծ սալը (1,8 մ × 0,8 մ) իր երկարությամբ ծածկում էր քարարկղի լայնքը արևելյան մասում, նրա վերջավորությունում։ Դամբարանի ծածկի սալերի վրա գտնվեցին գունազարդ թասի և խոշոր հասարակ կավամանների բեկորներ, որոնք անշուշտ հուղարկավորման ծիսակատարությունների հետ են աղերսվում։

Դամբարանն իրար վրա դրված հինգ մանր պոկովի բազալտե քարերով շարված նեղ և երկար քառանկյունի մի քարարկղ էր մոտ 3,9 մ երկարությամբ և 1,5 մ լայնությամբ։ Դամբարանի պատերը դեպի արևելք մասամբ նեղանում էին (1,2 մ)։

Քարարկղի կեսից ավելին առվի տարածքում էր և ամբողջությամբ ընկղմված ջրի մեջ։ Ներսում, մոտ 0,9 մ խորանալուց հետո բացվեց թաղումը։ Դամբարանի դրեթե $^3/_4$-ը, արևմտյան մասը, զբաղեցնում էին թվով տասնը-

չորս կավամաններ, իսկ հարավ-արևելյան կողմում ավազի վրա գտնվեց դամբարանի տիրոջ, միջին տարիքի մի տղամարդու բայքայված կմախքը։ Ննջեցյալը պառկեցվել էր աջ կողքի, կծկված վիճակում, դեմքով դեպի հարավ։ Գանգի մոտ ընկած էր սկավառակաձև գլխիկով վարսակալ-շքասեղը։ Դեմքի դիմաց դրված էր մանրակերտ մի կավաման, ձեռքերի մոտ՝ բրոնզե դաշույն և փոքրիկ նետասլաք։

Գանգից վեր շարված տասնչորս կավամաններ բավական խիտ դասավորություն ունեին, հատկապես վերին հատվածում գանվողները դրեթե հրպված էին միմյանց։ Մի քանիսի մեջ գտնվեցին խոշոր ե մանր եղջերավոր անասունների ոսկորներ։

Մեծամորի № 59 դամբանաբլուրն իր կառուցվածքով, թաղման ծեսով և գույքով բազմաթիվ զուգահեռներ ունի Հայաստանի կարմիրբլրդյան մշակութային համալիրի հուշարձաններում։ Այն բավականաչափ մոտ է Լճաշենում 1959 թ. պեղված դամբանաբլուրներին։ Վերջիններս բնորոշվում են հովհարաձև փռված բարձ ծածկով։ Նրանցից յուրաքանչյուրում հայտնաբերվել է մեկ մարդու կմախք, աջ կամ ձախ կողքի կծկված վիճակում, մոտ 8—9 կավամաններ, դաշույններ, կայծքարե ե օբսիդարարե նետասլաքներ, սակավաթիվ զարդեր, մանր եղջերավոր անասունների կմախքներ և այլն[11]։ Մեծամորի նման, Լճաշենի դամբարանների համար (№ 36—11, 46, 50) հատկանշական է սև ադաթափայլ, ատամնավոր գլանակով կատարված բջիջաշար զարդապատկերներով ընդլայնված կավամանների և գունազարդ խեցեղենի համադրությունը[12]։ Սակայն հակառակ Մեծամորի, վերջիններում դերակշռում է սև ադաթափայլ զարդարուն խեցեղենը։

Մեծամորի № 59 դամբանաբլուրի զուգահեռները կարելի է տեսնել նաև Վերին Նավերի դամբարանադաշտում։ Օրինակ, № 31 դամբանաբլուրում հանդուցյալը նույնպես թաղվել է դամբարանի հարավային մասում և նրանից վեր դրված են եղել տասնհինգ կավամաններ, մեծամասնություն գունազարդ[13]։ Հանդուցյալի ոտքերի մոտ գտնվել է բրոնզե դաշույն, որը հիշեցնում է Մեծամորիներ։ Դրեթե նույն պատկերը տեսնում ենք Վերին Նավերի № 12 դամբանաբլուրում, որը, ինչպես պեղող հնագետն է արտահայտվում, առանց որևէ կասկածի նույնական է և համաժամանակյա № 31-ին[14]։

Վերին Նավերի № 12 և 31 դամբանաբլուրները Մեծամորի № 59 դամբանաբլուրի նման նույնպես առատ են գունազարդ խեցեղենով։ Վերին Նավերի № 12-ը Մեծամորի № 59 դամբանաբլուրի նման ուղղված է արևելք-արևմուտք և հանդուցյալի կմախքը, անձնական իրերով հանդերձ, նույնպես դամբարանի հարավ-արևելյան մասում էր, իսկ մեծաքանակ, թվով 17 կավամանները խմբով տեղավորված են եղել կմախքից վեր[15]։ Արևելից-արևմուտք է ուղղված նաև Քեթիի № 18 դամբարանը։ Նրանում գտնվել են 17 կավամաններ[16]։

Կարմիրբերդյան մշակութային համալիրի դամբարաններում նկատվում է նաև թաղման գույքի մեծ նմանություն։ Մեծամորի կայծքարե շաղանակագույն փոքրիկ նետասլաքը խորը փորված ուղղանկյուն հիմքով, վարպետորեն, նրբորեն կատարված շիթաձև երկկողմանի ռետուշով (աղ. I. 2) իր գու-

---

11 Հ. Հ. Մնացականյան. Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները.— «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1965, № 2, էջ 103—104։

12 Նույն տեղում, աղ. III։

13 А. Е. Симонян. Могильник Верин Навер.—Археологические открытия (АО) 1986 года. М., 1988, с. 474.

14 А. Е. Симонян. Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении (по данным погребения № 12 из могильника Верин Навер)—ВФЖ, 1990, № 1, с. 206.

15 Նույն տեղում, էջ 189—190։

16 Л. А. Петросян. Раскопки памятников Кети и Воскеаска (III—I тыс. до н. э.). Ереван, 1989, с. 47.

դահեկաններն ունի Լճաշենի № 36, 40, 197[17] միջին բրոնզի դարաշրջանի դամբանաբլուրներում։ Միայն № 36 դամբանաբլուրում գտնվել են նշված տիպի մոտ 56 կայծքարե և վանակատե նետասլաքներ։ Նման տիպի նետասլաքներ հայտնաբերվել են էջմիածնից՝ խաթունարխ տանող ճանապարհի ձախ կողմի դամբարանադաշտի միջին բրոնզի դարաշրջանի № 1 դամբարանում, դաշույնի հետ միասին[18]։ Վերջինս իր ձևով մասամբ հիշեցնում է Մեծամորինը։ Նշված դամբարանը թվագրվում է մ. թ. ա. II հազարամյակի կեսով[19]։ Ուղղանկյուն փորվածքով նետասլաքները բնորոշ են նաև Վերին Նավերի միջին բրոնզի դարաշրջանի № 12[20] և ուշ բրոնզի դարաշրջանի № 3 դամբանաբլուրներին։ Վերջինում նետասլաքները հայտնաբերել են խոշոր եղջերավոր անասունի կրծքամասում[21]։



Աղ. I

Մեծամորի № 59 դամբանաբլուրում հայտնաբերված թեք ուսերով, ձգված եռանկյան ձևի սրածայր հարթ դաշույնը (երկարությունը՝ 19,5 սմ) նեղ, երկար, հարթ լեզվակի ծայրին ունի անցք (աղ. I. 1)։ Նրա եզրերը երկու երեսից, կման եղանակով նուրբ սրված են, որի հետևանքով միջնամասը մի

17 ՀՊՊԹ, № 2118/19, 2118/77—88, 2049/34։

18 А. А. Мартиросян. Указ. соч.. с. 67. рис. 33. 2. с. 69, рис. 34.

19 Նույն տեղում, էջ 67։

20 А. Е. Симонян. Новая трактовка.... рис. 5, 6.

21 Հ. Սիմոնյան. Վերին Նավեր դամբարանադաշտի 1977—1978 թթ. պեղումները.— Հայկական ՍՍՀ-ում 1977—1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված զեկուցումների թեզիսներ. Երևան, 1979, էջ 91։

փոքր հարթ է, թույլ շեշտված։ Դաշույնի եզրերը, հավանաբար աշխատվածության հետևանքով, բավականաչափ մաշված են։ Այն ունի իր նախատիպերը և իր անմիջական զուգահեռները Հայաստանում և նրանից դուրս։ Ընդհանուր ձևով այն հիշեցնում է վաղ բրոնզեդարյան որոշ դաշույններ, օրինակ՝ Էլառում, Էջմիածնում հայտնաբերվածները, Ե. Լալայանի կողմից Շարուր Դարալագյազում գտնվածը, Արծն-կարադ Ե/1 շերտում, ինչպես նաև Սաչխերիում, Ցարցիս Գորայում, Կորնթիում և Նովոսվոբոդնիի № 1 դամբանարանների դոլմենում (մ. թ. ա. 2300—2200 թթ.) հայտնաբերված դաշույնները[22]։

Սակայն վերոհիշյալ բոլոր դաշույնները նախատիպ են և ի տարբերություն Մեծամորի նմուշի, լեզվակի վրա չունեն անցք և իրանն էլ լրիվ հարթ է, եզրերը սրված չեն։ Մեծամորի դաշույնի ավելի մոտ զուգահեռները կարելի է տեսնել Առաջավոր Ասիայի II հազարամյակի առաջին քառորդի հուշարձաններում, օրինակ՝ Պաղեստինում՝ Երիքոյում հայտնաբերվածը, որը Կ. Շեֆերը թվագրում է Ուգարիթ 2-ով (մ. թ. ա. 1900—1750 թթ.) և 3-ով (մ. թ. ա. 1750—1600 թթ.)[23], իսկ Կիլիկիայում՝ Սոլիում հայտնաբերվածը՝ մ. թ. ա. 2000—1700 թթ.[24]։ Դ. Վ. Ստրոնախը Սոլիի և Ահլաթլիբելի դաշույնները համարում է Անատոլիայի վաղ բրոնզի դարաշրջանի դաշույնների 2 C խմբի ուշ տարբերակներից մեկը և նրա թվագրությունը հասցնում մինչև մ. թ. տ. 2000 թ.[25]։

Այսպիսով, Մեծամորի դաշույնի արխաիկ ձևը հնարավորություն է ընձեռում հաստատելու նրա ծագումնաբանական կապը վաղ բրոնզի դարաշրջանի մշակույթի հետ, մյուս կողմից, ձևերի նույնությունը ուրվագծում է հատկապես Անատոլիայի հետ Առաջավոր Ասիայի սերտ համագործակցությունը նաև միջին բրոնզի դարաշրջանում։

Սակայն Մեծամորի դաշույնի անմիջական զուգահեռները Հայաստանի միջին բրոնզի դարաշրջանի կարմիրբերդյան մշակութային համալիրում են։ Նման տիպի երկու դաշույններ հայտնաբերվել են Վերին Նավերի դամբանարաններում։ Մեծամորի դաշույնին ավելի մոտ է № 22 դամբանաբլուրում հայտնաբերվածը։ Այն չափերով զիջում է Մեծամորի դաշույնին, բացի այդ ծայրը սուր չէ, մի փոքր կլորանում է, իսկ երկու կողմերի եզրերը մինչև վերջ չեն սրված[26], սակայն երկու դաշույններն էլ հնագիտական նույն միջավայրի արդյունք են, այսինքն ուղեկցվում են կրկնասակրերով, ցանցադաշտերով զարդարված, գունագարդ և ատամնավոր գլանակով կատարված բջիջաղարդ, սև ագաթափայլ խեցեղենով[27]։ Պեղող հնագետի կողմից Վերին Նավերի № 22 դամբանաբլուրը համարվում է կարմիրբերդյան փուլից Սևանուզերլիկյանին անցման մի օղակ և մ. թ. ա. XVIII դարի կեսը համարում կարմիրբերդյան դարաշրջանի վերին սահմանը[28]։ Սակայն կարմիրբերդյան փուլն ու Սևան-ուզերլիկյանը մեկ ամբողջական մշակութային համալիր են և նրանց միջև անցման օղակ չի կարող լինել։ Հետևաբար № 22 դամբանաբլուրը հնարավոր չէ թվագրել նման եղանակով։

---

22 Է. Վ. Խանզադյան. Էլառ-Դարանի. Երևան, 1979, աղ. VII; 9—11։

23 Cl. F. A. Schaeffer. Stratigraphie Comparee et Chronologie de l'Asie Occidentale (IIe et IIe millerarles). London, 1948, ill. 117; 44. p. 133—134. 140—141.

24 Նույն տեղում, էջ 276, նկ. 174. 2։

25 D. B. Stronach. The development and diffusion of metal types in early bronze age Anatolia.—Anatolian Studies (AS). Journal of the British Institute of Archaeology at Ankara. vol. VII. 1957, p. 94—96, fig. 2.7 and 3.3.

26 А. Е. Симонян. Два погребения эпохи средней бронзы могильника Верин Навер.—Советская археология (СА), 1984, № 3, с. 125, рис. 3.4.

27 Նույն տեղում, էջ 125, նկ. 3. 1—3։

28 Հ. Սիմոնյան. Վերին Նավեր դամբարանադաշտի 1977—1978 թթ. պեղումները, էջ 133։

Դաշույններից մեկն էլ հայտնաբերվել է Վերին Նավերի № 31 դամբանաբլուրում[29]։ Վերջինս նույնպես մի փոքր տարբերվում է Մեծամորինից, լեզվակն ավելի մեծ թեքություն ունի դեպի ուսերը և դաշույնի ծայրը սուր չէ, կլորանում է։ Հ. Սիմոնյանը, ինչպես վերը նշվեց, № 31 դամբարանը համարում է № 12-ին ժամանակակից և թվագրում մ. թ. ա. II հազարամյակի I քառորդով[30]։

Անդրադառնալով Վերին Նավերի № 12 դամբարանի թվագրությանը, արժե նշել, որ բացի խեցեղենից նրանում գտնվել են բրգաձև գլխիկով շքասեղներ[31], որոնց զուգահեռները թվագրվում են մ. թ. ա. XV դարով և հարատևվում նաև մինչև ուշ բրոնզի վաղ փուլը։ Վերին Նավերի № 12 դամբարանի թվագրության համար հետաքրքիր է քայլող գլանակով կատարված վազող պարույրների զարդանկարով կավամանը[32]։ Նրա զուգահեռը Փարվանայի «Ջաչկարի» դամբանաբլուրի (պեղված 1979 թ.) առաջին խմբի խեցեղենում է, որը վերադրվում է ուշ բրոնզի ամենասկզբին կամ անցման փուլին[33]։

Երեք դաշույններ, ինչպես վերը նշվեց, հայտնաբերվել են Լճաշենի դամբանաբլուրներում (№ 36, 40)։ № 36 դամբանաբլուրում երկու դաշույն է հայտնաբերվել, մեկը փոքր, երկկողմանի սրված եզրերով, մյուսը ձևով և չափերով մոտ է Մեծամորի դաշույնին[34]։

Վերը տեսանք, որ նույն դամբարանում էին նաև Մեծամորի դաշույնի հետ հայտնաբերված նետասլաքների զուգահեռները։ Լճաշենի № 40 դամբանաբլուրում հայտնաբերված դաշույնի լեզվակը բավականաչափ կարճ է[35]։ Այն ավելի մոտ է Էջմիածնից խաթունարխ տանող ճանապարհի ձախ կողմի դամբարանում վերը նշած նետասլաքների հետ գտնված, մ. թ. ա. II հազարամյակի կեսով թվագրվող դաշույնին[36]։ Լճաշենի դաշույնները ուղեկցվում են կարմիրբերդյան խեցեղենով և թվագրվում մ. թ. ա. XX—XVI դդ.[37], սակայն հիմնավորման համար պեղող հնագետը փաստարկներ չի բերում։

Կարճ և լայնադիր իրան ունի Մեծամորում, վաղ երկաթի դարաշրջանի դամբանաբլուրի հյուսիսային պատի դրսի կողմում գտնված դաշույնը, որը, ինչպես վերը նշվեց, տեղում, միջին բրոնզի դարաշրջանի ավերված դամբարանից է։

Այսպիսով, Հայաստանի տարածքում հայտնաբերված վերոհիշյալ դաշույնները, չնայած մասնակի տարբերություններին, մի նոր լոկալ խումբ են կազմում և իրենց ձևով, կատարման եղանակով լրիվ զանազանվում են Կիրովական-Թրիտլեթյան մշակույթին պատկանող, ինչպես նաև ուշ բրոնզի դարաշրջանի դաշույններից։

Մեծամորի տիպի դաշույնների եզակի օրինակներ, փոքր տարբերակներով, մեզ հայտնի են Վրաստանում և կենտրոնական Կովկասում։ Վրաստանի տարածքում միջին բրոնզի դարաշրջանի դաշույններից Մեծամորին մոտ է Թբելիսիի (Թբիլիսի) № 53 դամբարանում հայտնաբերվածը, որը թվագրվում է մ. թ. ա. XV դարով[38]։ Սակայն Թբելիսիի դաշույնին ուղեկցող սև փայլեցված բջիջազարդ խեցեղենն իր ձևով, զարդանկարման եղանակով զանազանվում է Մեծամորի № 59 դամբարանի խեցեղենից և ավելի հակված է

---

29 А. Симонян. Новая трактовка..., с. 206, рис. 6.

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում, էջ 202, նկ. 5.5։

32 Նույն տեղում, էջ 193, նկ. 3.1։

33 Г. Е. Арешян и др. Указ. соч., с. 66.

34 Հ. Հ. Մնացականյան. Լճաշենի մշակույթի..., աղ. I. 8, 11։

35 Նույն տեղում, աղ. I. 9։

36 А. А. Мартиросян. Указ. соч., с. 67, 69, рис. 34.

37 Հ. Հ. Մնացականյան. Նշվ. աշխ., էջ 103, 104։

38 Тбилиси, Археологические памятники, I, Тбилиси, 1978, с. 56, рис. 23, табл. XIX, № 430.

դեպի ուշ բրոնզի մշակույթի զարգացման վաղ փուլերը։ Նրանում բացակայում է նաև գունազարդ խեցեղենը։

Նմանատիպ մի դաշույն լեզվակի վրա ունցքով, գտնվել է Կախեթի միջին բրոնզի դարաշրջանի վերջով թվագրվող «Շավի միցիս վելի»-ի № 17 գամբարանում[39]։

Կատարման եղանակով և ձևով Մեծամորյան տիպի դաշույններն են հիշեցնում կենտրոնական Կովկասում հայտնաբերվածները, հատկապես Տլիի № 58 գամբարանինը[40], որոնք թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի II կեսով[41]։

Այսպիսով, Մեծամորի տիպի դաշույնները բնորոշ են հատկապես Հայաստանի միջին բրոնզի դարաշրջանի կարմիրբերդյան մշակութային համալիրին։ Ավելի ուշ նրանք երևան են գալիս կենտրոնական Կովկասում, որպիսի հանգամանքը թելադրված է, հավանաբար, Հայաստանի մետաղագործության հյուսիսի վրա ունեցած ազդեցությամբ։

Մեծամորի № 59 գամբարանում հայտնաբերված նյութերի շարքում իր ուրույն տեղն ունի սկավառակաձև գլխիկով շքասեղ-քորոցը (երկարությունը 6,5 սմ), որի պարուրաձև ոլորված ցողունն ավարտվում է սուր ծայրով (աղ. I. 3)։ Նրա սկավառակաձև գլխիկի կենտրոնը պսակված է փոքրիկ, կիսագնդաձև նյուստով (ստացվել է հակառակ կողմից դուրս սեղմելու եղանակով)։ Հայաստանի տարածքում նման մի քորոց հայտնաբերել է ժակ դե Մորգանը Մուսի-Երիում[42]։ Այն հար և նման է Մեծամորի քորոցին, միայն ցողունը ոլորուն չէ։

Սկավառակաձև գլխիկով զարդաքորոցների ավանդույթն ավելի հին է։ Նրա վաղ օրինակները հայտնաբերվել են Անատոլիայում, Էգեյան աշխարհում։ Ալիշարի էնեոլիթյան շերտում գտնվածը[43] ձևով մոտ է Հայաստանի քորոցներին։ Դենդրայում և Արգոլիսում (Էգեյան աշխարհ) հայտնաբերված վաղ բրոնզեդարյան արծաթե զարդաքորոցների սկավառակաձև գլխիկը զարդարված է զույգ բազմագալար պարույրներով[44]։ Մեծամորի զարդաքորոցին ձևով և չափերով ավելի մոտ է Յումուկ-թեփեի (Մերսին) տասնմեկերորդ շերտում հայտնաբերվածը, որը թվագրվում է մ. թ. ա. 1950—1800 թթ.[45], սակայն վերջինիս ցողունը ոլորուն չէ։

Հայաստանից հյուսիս սկավառակաձև գլխիկով զարդաքորոցները լայն տարածում ունեին։ Կենտրոնական Կովկասում նրանք սկիզբ են առնում մ. թ. ա. XVI դարում և հարատևում մինչև մ. թ. ա. XI դարի վերջը[46]։

Դրանցից հայտնաբերվել են Հարավային Օսիայի Քվասաթալիի միջին բրոնզի դարաշրջանի կոլեկտիվ թաղումներով գամբարաններում (ընդ որում գտնված որոշ դաշույններ ձևով հիշեցնում են Մեծամորի դաշույնը)[47], Տլիի

---

39 Д. Квавадзе. Курганы эпохи средней бронзы урочища «Шави мицис пели».—Труды Кахетской арх. экспедиции, т. VIII, Гареджи, Тбилиси, 1988, с. 60, 261, табл. IX, 9.

40 Б. В. Техов. Центральный Кавказ в XVI—X вв. до н. э. М., 1977, с. 16, рис. 12.

41 Նույն տեղում, էջ 21, 22։

42 J. De Morgan. Mission scientifique au Caucase. T. I. Paris, 1889, p. 122, III. 99.

43 Erich F. Schmidt. Anatolia Through the Ages Discoveries at the Alischar Mound 1927—1929, Chicago, p. 63, fig. 96A, p. 159.

44 Hans-Günter Buchholz. Vassos Karageorghis. Altägäis und Altkypros. Leipzig, 1972, S. 53, 270, № 623.

45 John Garstang. Prehistoric Mersin. Oxford, 1953, fig. 149, II, pl. XXIX.

46 Б. В. Техов. Центральный Кавказ..., с. 37.

47 О. Джапаридзе. Квасатальский могильник эпохи бронзы в Юго-Осетии.—КСИИМК, вып. 60, М., 1955, с. 26, рис. 3.3, 2.2, II, с. 27.

№ 29, 42[48] ե Նուլիի դամբարաններում[49]։ Նման քորոցներ դտնվել են նաև Հյուսիսային Օսիայում՝ Կումբուլտայում[50]։ Սկավառակաձև գլխիկով զարդաքորոցները հատկանշական են նաև Հյուսիս-արևելյան Կովկասի հուշարձաններին։ Հայտնաբերվել են Լեռնային Դաղստանում՝ Գինչիի դամբարաններում[51], հատկապես № 5 դամբանախցի հինգերորդ հարկի, № 9 դամբանախցի երկրորդ և երրորդ հարկերի և № 11 խցի դամբարաններում[52]։ Մ. Հաջիևը Գինչիի դամբարանադաշտը թվագրում է մ. թ. ա. XIX—XVIII-ից մինչև VII դդ.[53], իսկ Վ. Դ. Կոտովիչը Գինչիի դամբարանների զարդաքորոցները թվագրում է մ. թ. ա. 2000—1500 թթ.[54]։ Նշված ձևի զարդաքորոցները բնորոշ են նաև Չեչնո-Ինգուշեթիայի հուշարձաններին, հայտնաբերվել են Գատինկալեի (որոնք թվագրվում են մ. թ. ա. 1700—1400 թթ.)[55] և Էգիկալ գյուղի մոտի դամբարաններում[56]։

Այսպիսով, սկավառակաձև գլխիկով զարդաքորոցները բավականաչափ լայն տարածում են գտել Հին Արևելքում և հատկապես Հայկական լեռնաշխարհից հյուսիս։

Մեզ մնում է այժմ անդրադառնալ Մեծամորի № 59 դամբանաբլուրում հայտնաբերված խեցեղենին։ Դամբարանի տասնչորս կավամաններից տասը գունազարդ են, մեկը՝ կարմիր, անզարդ, երկուսը՝ սև ագաթափայլ բջիջաշար «քայլող» գլտնակով զարդանկարված (աղ. I. 5), մեկը՝ սև, խամրած, քայքայված մակերևսով, միջին մասում ռելիեֆ գոտի (աղ. I. 6) և մեկ մանրակերտ կավաման։

Տաս գունազարդ կավամանները (կարմիր հիմնագույնի վրա սև զարդապատկերներ) երեք տիպի են՝ գլանաձև վզով, կլորացող, մի փոքր ձգված իրանով կճուճներ (աղ. II. 1,5) կարճ վզիկով, ցածրադիր, ուռուցիկ իրանով կավամաններ (աղ. II. 2, 3) և անվիզ, կլորացող փքված իրանով թաղարներ (աղ. II. 4,6), բոլորն էլ կարմիրբերդյան մշակութային համալիրներին են պատկանում, կրում են գրեթե նույն զարդապատկերները։ Դրանք ուսերը զարդարող, գագաթներով միացող ղույգ եռանկյունիների, իրար մեջ հագած անկյունների (լաբիրինթների), ցանցադաշտերի, ալիքաձև գոտիների իմիտացիաներ են։ Մի մասի վերոհիշյալ զարդապատկերների կոմպոզիցիան ավարտվում է պարույրների գոտիներով։

Թե՛ գունազարդ և թե՛ սև ագաթափայլ, սպիտակ ներկով ընդելուզված ատամնավոր «քայլող» գլանակով զարդանկարված խեցեղեն բազմաթիվ դուգահեռներ ունի։ Հայաստանի միջին բրոնզի դարաշրջանի հուշարձաններում։

---

48 Б. В. Техов. Центральный Кавказ..., с. 37. 10. рис. 7.2. 5. с. 11. рис. 8.3. с. 38. рис. 39

49 Б. А. Куфтин. Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию.—ИАН. ГрузССР, Тбилиси. 1949. с. 22.

50 П. С. Уварова. Могильник северного Кавказа.—Материалы по археологии Кавказа (МАК). т. VIII. М., 1900. с. 215. табл. XXXVII, 5—7.

51 М. Г. Гаджиев. Древние очаги металлообработки в Дагестане.—Краткие сообщения (КС), № 192. М., 1987, с. 10. рис. 2, 19.

52 М. Г. Гаджиев. Из истории культуры Дагестана в эпоху бронзы (могильник Гинчи), Махачкала, 1969. с. 51, рис. 22.44, 45, с. 69, р. 31.7, с. 71, 74, рис. 34, I с. 75.

53 Նույն տեղում, էջ 157։

54 В. Г. Котович. Проблемы культурно-исторического и хозяйственного развития населения древнего Дагестана, М., 1982, с. 68, рис. 8, 100, 101.

55 В. И. Марковин. Новые памятники эпохи бронзы в горной Чечне (могильник Гатын-кале). Древности Чечено-Ингушетии. М., 1969, с. 64, 65, рис. 9.3, с. 68. рис. 11.3, с. 124, 132, 41. с. 24, рис. 4.

56 В. И. Марковин. Склепы эпохи бронзы у сел. Эгикал в Ингушетии.—СА, 1970, № 4, с 90.

Մեծամորի դամբանարլուրի գունազարդ կավամաններն իրենց զուգահեռներն ունեն կարմիրբերդյան մշակույթի գրեթե բոլոր դամբարանների գունազարդ խեցեղենում, Կարմիրբերդի, Վերին Նավերի, Լճաշենի, Էլառի, Կամոլի, Հառիճի, Ապարանի, Քութիի դամբարաններում և այլուր։ Վերոհիշյալ հանգամանքը հնարավորություն չի ընձեռում գունազարդ խեցեղենով կարմիրբերդյան մշակույթի մեջ ժամանակագրական հերթականություն սահմանել։

Աղ. II

Դամբանաբլուրում գտնված սև ագաթափայլ, դուրս ճկված շուրթերով, գնդաձև իրանով զույգ կճուճները զարդանկարված են սպիտակ ներկով ընդելուզված, երկատամ «քայլող» գլանակով կատարված հորիզոնական գոտիներով և նրանից ցած զույգ զիգզագներով, որոնցից մեկի անկյունում կախված են կարճ, դարձյալ զույգ գոտիներ (աղ. I. 5)։

Նրանք իրենց զուգահեռներն ունեն Այրիվանքում[57], որը, սակայն, ուղեկցող նյութեր չունի։ Նման մի խեցու բեկոր գտնվել է Մուխանաթթափայում[58], մեկ ամբողջական կճուճ հայտնաբերվել է Կարմիր-բերդում և տեղ է գտել Պ. Վ. Զարկովսկու անձնական հավաքածուում[59]։ Այդ կճուճի զուգահեռը կա-

57 ՀՊՊԹ, № 1898։

58 ՀՊՊԹ, № 1439/37։

59 К. Х. Кушнарева. Тазакентский могильник в Армении.—СА 1960, № 1, с. 141, рис. 3.1.

բելի է տեսնել նաև Լճաշենի «Վիշապ» կոթողի տակ պեղված դամբարանում, որտեղ երկու նշված տիպի կճուճները ուղեկցվում են սանրատամ շեղանկյուններով, զիգզաղ գոտիներով զարդանկարված գունազարդ խեցեղենով և, որ կարևորն է, արդեն ուշ բրոնզի դարաշրջանին բնորոշ խեցեղենով, հատիկազարդ հասարակ խոհանոցային կավամաններով[60]։

Վերջիններից մեկի ողջ իրանը ծածկված է համակենտրոն բազմաշար նրբաղիծ խիտ գոտիներով (դուրգի անիվի հետքերով), մի զարդաձև, որն սկիզբ է առնում միջին բրոնզից ուշ բրոնզի անցման փուլում և մեծ տարածում դանում ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի ուշ բրոնզեդարյան հուշարձաններում[61]։

Ուշագրավն այն է, որ Լճաշենի վերոհիշյալ խոհանոցային կճուճն իր զուգահեռն ունի Թրելիեբիի մ. թ. ա. XV դարով թվագրվող № 53 դամբարանում, որտեղ գտնվել են նաև բրգաձև գլխիկով շքասեղներ և Մեծամորի դաշույնի զուգահեռը[62]։

Մեծամորի սև ագաթափայլ կճուճների երկատամ «քայլող» գլանակով կատարված զիգզագ գոտիները, բացի հիշյալ զարգացման փուլից, հարատևում են նաև ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլում։ Նմանատիպ զարդապատկերներով կճուճներ հատկանշական են Ջվեմո Շուլավերիի ուշ բրոնզի դարաշրջանով թվագրվող № 2 դամբանաբլուրին[63], Իմիրիս Գորայի մ. թ. ա. XIV դարով թվագրվող № 12 դամբարանին[64]։

№ 59 դամբարանում հայտնաբերված սև, քայքայված մակերեսով, զարդանկարը կորցրած կճուճը իրանի ուժեղ շեշտված երկկոնիկ մասում ունի ռելիեֆ գոտի (աղ. I. 6)։ Այն իր ձևով հատկանշական է կարմիրբերդյան սև ագաթափայլ, քայլող դրոշմիչով զարդանկարված խեցեղենի համար։ Ռելիեֆ գոտիներով, պարույրների համադրությամբ հարուստ զարդապատկերներով կավամաններ հայտնաբերվել են Լճաշենի № 36—38, 46, 50 դամբանաբլուրներում[65]։ Նման մի կճուճ էլ գտնվել է Իմիրիս Գորայի վերը հիշված № 12 դամբարանում[66]։ Պարույրներով ավարտվող զարդամոտիվները՝ կատարված բջիջաշար ատամնավոր գլանակով, հասել են մինչև Կախեթ։ Նման զարդապատկերներ են կրում միջին բրոնզի վերջով թվագրվող՝ Շավի Միցիս Վելիի № 16 և № 18 դամբանաբլուրների սև փայլեցրած կավամանները։ Ընդ որում, № 16 դամբարանի կճուճը վերոհիշյալների նման իրանի երկկոնիկ մասում ունի ռելիեֆ գոտի[67]։

Սակայն իրանին կամ ուսերին ռելիեֆ գոտի են կրում ատամնավոր քայլող գլանակով զարդանկարված նաև այլ ձևերի կավամաններ։ Օրինակ, Մե-

---

60 Պեղումները է. Վ. Խանզադյանի, նյութերը հրատարակված չեն և գտնվում են Մեծամորի հնագիտական թանգարանում, տե՛ս 21/2—6։

61 К. Н. Пицхелаури. Восточная Грузия в конце бронзового века. Тбилиси, 1979, с. 78

62 Тбилиси I, Тб., 1978, с. 56, рис. 23, 426.

63 Отчет Квемо-Картлийской археологической экспедиции (1965—1971 гг), Тбилиси, 1975, с. 161, рис. 59, № 2.9, 10, 12, табл. XXX—XXXI, с. 211.

64 Նույն տեղում, աղ. LI—LII, էջ 211։

65 ՀՊՊԹ, № 2118/13բ, 36, 42, 135, 142, 151, 158, 160, 161։

66 Отчет Квемо..., табл. I, II.3 .

67 Д. Квакадзе. Указ. соч., с. 60, табл. LI, IX. L, XI.

ծամորի № 83 դամբարանի երկու կավամանները, Վերին Նավերի № 12 դամբարանի կավամանը[68], Երևանում՝ Կիրովի անվան գործարանի մոտ գտնված կճուճը[69], Հառիճի մ. թ. ա. XIX—XVIII դդ. թվագրվող № 111 դամբարանի երկու կավամանները[70], Ծաղկալանջի № 139 դամբարանի խորը քրեղանը, որը թվագրվում է միջին բրոնզից ուշ բրոնզի անցման փուլով, մ. թ. ա. XV դարով[71]։ Իրանին զույգ դոտիներ են կրում Ակներում Ն. Յա. Մառի կողմից 1889 թ. հայտնաբերված մուգ շականակագույն կավամանը[72] և Կարմիր բերդում պատահական գտնված և ենթադրաբար մ. թ. ա. XVII—XVI դդ. թվագրվողը[73]։

Այսպիսով, Մեծամորի № 59 դամբարանը բազմաթիվ թելերով կապված է կարմիրբերդյան մշակութային համալիրի հետ, սակայն հավանաբար նրա զարգացման վերջին փուլը չէ։ Մեծամորի դամբարանները պատկանում են միջին բրոնզի դարաշրջանի վերջին և միջին բրոնզից ուշ բրոնզի դարաշրջանին անցման փուլերին։ Բացի խեցեղենից, նրանց թվագրության համար կողմնորոշիչ են նաև բրոնզե իրերն ու ուլունքները։ Ուսումնասիրությունները վկայում են նախ նրանց մի մասի տեղական արտադրությունը, ապա հաստատում նաև Հայկական լեռնաշխարհի կապն արտաքին աշխարհի հետ՝ առաջավորասիական երկրների և հյուսիսային հարևանների հետ, որի շուռտավիղը տարածվում է մինչև հյուսիս-արևելյան Կովկաս։

Անշուշտ Հայկական լեռնաշխարհը հանդիսացել է հարավից հյուսիս մշակութային հոսանքների հաղորդիչը։

Կարմիրբերդյան մշակութային համալիրի դամբանաբլուրներում բացակայում են հասարակության շերտավորումն արտահայտող փաստարկները։ Կիրովական-Թրիալեթյան մշակութային համալիրի դամբանաբլուրներում, ինչպես վերը նշվեց, մենք ունենք լրիվ հակառակ պատկերը։ Կարմիրբերդյան մշակույթը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում և Անդրկովկասի նշված հատվածներում մեծ տարածք է զբաղեցնում։

Միջին բրոնզի դարաշրջանի մշակույթը հնագետների կողմից թվագրվում է տարբեր։ Կիրովական-Թրիալեթյան մշակութային համալիրի ակունքները տեսնելով մ. թ. ա. III հազարամյակի վերջին փուլում, համոզված չենք, որ այն գոյատևում է մինչև մ. թ. ա. II հազարամյակի I քառորդը, քանի որ այն բազմաթիվ աղերսներ ունի ուշ բրոնզի վաղ փուլերի մշակույթի հետ, որոնք նրա հարատևության խոսուն վկաներն են և միաժամանակ հաստատում են ծագումնաբանական այն կապը, որը գոյություն ուներ նշված մշակույթների միջև։

Կիրովական-Թրիալեթյան միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի կրողները Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. III հազարամյակի տեղաբնիկների ժառանգորդներն են։ Նրանք նույն էթնիկ կազմն են ունեցել։ Բազման ծեսը

---

68 А. Е. Симонян. Новая трактовка..., с 193, рис. 3.2.

69 Ս. Ամիրյան. Հնագիտական նոր հայտնաբերում Երևանի տերիտորիայում.—ՊԲՀ, 1969, № 3, էջ 270, աղ. 13, էջ 272։

70 Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 109, рис. 63.

71 Г. Е. Арешян и др. Указ. соч., с. 71, табл. IX, I.

72 ՀՊՊԹ, № 765/36։

73 С. А. Есаян. Ереван, Археологический очерк. Ереван, 1969, с. 32, табл. 22 3.

և արվեստի նմուշների զարդապատկերների ստուգաբանությունն ապացուցում է, որ այդ մշակույթը կրողները հնդեվրոպացիներ են։ Ըստ Թ. Վ. Գամկրելիձեի և Վյաչ. Վս. Իվանովի հնդեվրոպացիներ են նաև Կուր-արաքսյան մշակույթը կրող որոշ էթնիկ միավորումներ[74]։ Ուսումնասիրություններն ապացուցում են, որ նրանք Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզի դարաշրջանի մշակույթի կրողներն են։

Հետազոտությունները հավաստում են, որ կարմիրբերդյան մշակութային համալիրը մի ուրույն խումբ է կազմում, զարմանալիորեն տարբեր Կիրովական-Թրիալեթյան մշակույթից, ինչպես թաղման ծեսով, այնպես էլ թաղման գույքով։

Ցնայած վերը ներկայացված նյութերն իրոք միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի վերջին փուլին են պատկանում, սակայն բնակատեղիների շերտագրական պատկերը, այնուամենայնիվ, խորհելու առիթ է տալիս։ Հնարավո՞ր է արդյոք, որ Հայկական լեռնաշխարհում, ժամանակագրական որոշակի հատվածում Կիրովական-Թրիալեթյան և կարմիրբերդյան մշակութային համալիրները զարգանային կողք կողքի։

Անշուշտ շատ հարցեր դեռևս մութ են և իրենց լուծումը կստանան ապագայում, ոչ միայն դամբարանների, այլ հատկապես պատմական Հայաստանի կենտրոնական, բուն տարածքի բնակատեղիների սիստեմատիկ պեղումների միջոցով և անշուշտ գրավոր աղբյուրների ընձեռած հնարավորություններով։

КУЛЬТУРА ЭПОХИ СРЕДНЕЙ БРОНЗЫ И КУРГАН № 59 МЕЦАМОРА

Доктор ист. наук Э. В. ХАНЗАДЯН

Резюме

Общество Армянского нагорья в конце III тыс. и в 1 половине II тыс. до н. э. вступает в новую, своеобразную фазу развития—эпоху средней бронзы, которая полна противоречиями, а иногда и нерешенными вопросами датировки. В эпоху средней бронзы на территории северо-восточной Армении существовало два культурных комплекса—Кировакан-Триалетский и Кармирбердский. А. Мартиросяном был выделен также третий—Севан-Узерлинский комплекс. Однако изучение материалов поселений и погребений подтверждает совместное существование Кармирбердской и Севан-Узерлинских групп. Мецамор принадлежит к Кармирбердской культуре. Особого внимания среди семи раскопанных курганов заслуживает курган № 59. В нем со скорченным скелетом были найдены: бронзовый кинжал, булавка с дисковидной головкой, кремневый наконечник стрелы, четырнадцать керамических сосудов и т. д. Кинжал Мецамора имеет свои прототипы в Армении (Верин Навер, Лчашен) и на Древнем Востоке. Единичные экземпляры были найдены в Грузии (Трелиебии, в Кахетии «Шави Мицис Вели»), на центральном Кавказе (Тли). К Мецаморской булавке близки найденные в Мерсине (Юмук-тепе, 1950—1800 гг. до н. э.). Четырнадцать глиняных со-

---

[74] Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Древняя Передняя Азия и индоевропейская проблема. Временные и ареальные характеристики общеиндоевропейского языка по лингвистическим и культурно-историческим данным.—ВДИ, М., 1980. № 3, с. 26.

судов, из них десять монохромно расписные, два чернолощенных, украшенные точечно-гребенчатым шагающим штампом и др., имеют свои многочисленные аналогии в Кармирбердских памятниках. Погребения Мецамора относятся к последней стадии и переходному периоду от эпохи средней к позднему периоду бронзы и могут датироваться XVI—XV вв. до н. э. Границы среднебронзовой культуры на юге сейчас доходят до оз. Ван. Исследования также подтверждают, что носителями Кировакан-Трипалетской культуры, а также культуры эпохи III тыс. до н. э. Армянского нагорья, которые морфологически связаны, являются индоевропейцы.